ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1962 Общественные науки

Մ. Ա. Բաբայան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

(Թռուցիկ ակնարկ)

Ներկայումս արտասահմանյան հայ գաղութներում լույս է տեսնում մոտ 130 անուն պարբերական, սկսած օրաթերթից մինչև տարեգիրքը։ Պարբերականներ հրատարակում են սանագան հասարակական-մշակութային կազմակերպություններ, սպարտիաներ, հայրենակցական միություններ, Հայկական Բարեգործական Ընդհանուր միության մասնաճյուղեր, ուսումնական հաստատություններ, կրոնական կազմակերպություններ, ինչպես և անհատ մարդիկ։ Հարկ է ասել նաև, որ պարբերականների հրատարակությունը սփյուռքում շատ հաճախ կապված է մեծ զոհողությունների և նյութական ու բաղարական դժվարությունների հետ։

Տարբեր է հրատարակվող թերթերի ու ամսագրերի ուղղությունը, բովանդակությունը, արժեքն ու կատարած դերը սփյուռքահայ հասարակական-մշակութային կյանքում։ Մեծ չէ նրանց տպաքանակը. առանձին դեպքերում այն հասնում է մինչև չորս հազարի։ Մեծ մասի տպաքանակը հազարից ցածր է։ Նպատակ չունենալով մանրամասնորեն կանգ առնելու դրանցից յուրաքանչյուրի վրա, մենք այստեղ կբավարարվենք տալով միայն այդ պարբերականների ընդհանուր ու հակիրճ բնութագրումը, խմբավորելով դրանք ըստ երկրների, որչափով որ դա հնարավոր է մեր ձեռքի տակ եղած նյութերի սահմաններում[1]։

Ինչպես հայտնի է, նախասովետական պատմաշրջանում հայերեն առաջին տպագիր գիրքը և առաջին պարբերականը լույս են տեսել արտասահմանում ու այնուհետև երկար ժամանակ Հայաստանից դուրս շատ ավելի գրքեր ու թերթեր են հրատարակվել, քան բուն երկրում։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո միայն հայ կուլտուրան, մամուլը և տպագրական գործը բուռն թափով սկսեցին զարգանալ մայր հողի վրա։

Սակայն հայ պարբերական մամուլը, ինչպես նաև գրքի տպագրությունը, թափառելով հայ ժողովրդի բեկորների հետ երկրից-երկիր և կիսելով նրանց կյանքի դժվարությունները, մինչև օրս էլ պահպանում են իրենց դերությունը սփյուռքում, ուր այժմ ավելի քան մեկ միլիոն մարդ է ապրում։

Սփյուռքահայ ներկա մամուլը բավական խայտարղետ երևույթ է ներկայացնում, հարազատորեն արտացոլելով տարբեր երկրներում ու տարբեր հասարակական-բաղաքական միջավայրերում ստեղծված հայկական գաղութների նույնքան խայտարղետ կյանքը։ Սակայն այդ խայտաբղետ բազմազանությունը ունի և իր ընդհանրությունները։ Առաջինը և որոշիչը դրանց մեջ սեփական լեզուն ու մշակույթը, գիրն ու գրականությունը չկորցնելու մտահոգությունն է և սերը դեպի հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։ Հայրենասիրության այդ վեհ զգացմունքն է, որ կապում է բոլոր հայ գաղութները Սովետական Հայաստանի հետ, գոյատևելու կորով ու հույս ներշնչում նրանց, հանդիսանալով գործելու և պայքարելու ներքին կարևոր մի ուժ։

Ավելորդ չի լինի հիշեցնել, որ հայկական ամենափոքր գաղութն անգամ միատարր չէ։ Հակամարտությունն ու պայքարը հասարակականորեն տարբեր մտածելակերպ ունեցող խավերի միջև իրենց զգացնել են տալիս ամենուրեք։ Որոշ, իրենց չեզոք հայտարարող խմբակցություններ հաճախ ուզում են հավատացնել, և թերևս իրենք էլ հակամետ են հավատալու, թե իբր կարելի է ու պետք է խուսափել դրանից։ Այդպես մտածողները պարզապես չեն ուզում ընդունել, որ հակադիր դասակարգերից կազմված հասարակության մեջ, կամ այդ դասակարգերի գաղափարախոսությունն արտահայտող տարբեր խավերի միջև պայքարն անխուսափելի է և որ դա բոլորովին էլ կախում չունի այս կամ այն անձնավորության կամ խմբակցության բարկամքից։

---

1 Հարկավոր է այստեղ նշել, որ դժբախտաբար սփյուռքահայ ոչ բոլոր պարբերականներն են ստացվում Հայաստանում։ Արտասահմանում հրատարակվող հայ պարբերական մամուլի ու գրականության ստացման և ուսումնասիրման հարցը կարոտ է ավելի լուրջ ուշադրության։

Այդ պայքարի հիմնական, որոշիչ կողմը՝ փորձաքարը, վերաբերմունքն է դեպի Սովետական Հայաստանը։ Դա միանգամայն հասկանալի է։ Հայաստանը աշխարհը բաժանող երկու՝ առաջադիմական և հետադիմական սիստեմներից առաջինի՝ սոցիալիստականի հետ է, խաղաղության և ժողովուրդների բարեկամության կողմնակից։ Սփյուռքում ով Հայաստանի հետ է՝ առաջադիմության կողմ է։ Իսկ Հայաստանի հետ է սփյուռքի ենթող մեծամասնությունը։ Այդ մեծամասնության մեջ մտնում են, բացի կոմունիստներից, նաև մի շարք այլ առաջադիմական կազմակերպություններ։

«Ներկայումս, օրինակ,— ասում է ՀԿՊ ԿԿ առաջին քարտուղար ընկ. Յա. Ն. Զարոբյանը պարտիայի XXII համագումարին տված իր զեկուցման մեջ,— հնչակյան պարտիան վարում է Սովետական Հայաստանին աջակցելու գիծ, պրոպագանդում է մեր ռեսպուբլիկայի նվաճումները, պայքար է մղում դաշնակ թափթփուկների դեմ, հանգես է գալիս իմպերիալիզմի դեմ հանուն խաղաղության։ Մոտավորապես նույնպիսի դիրքերում է կանգնած ռամկավարների պարտիան»։

Նրանք և առաջադիմական մյուս խմբակցությունները չեն կիսում գաղափարական մեր բոլոր հայացքները, և մենք էլ, ինչպես ասում է ընկ. Զարոբյանը իր զեկուցման շարունակության մեջ, «մտադիր չենք նրանց գաղափարական որևէ զիջում անել, բայց մենք ողջունում ենք նրանց հայրենասիրական գործունեությունը կապիտալիստական երկրների հայկական գաղութների պայմաններում»։

Սփյուռքում կան նաև հետադիմական ուժեր, որոնք դաշնակցել են իմպերիալիզմի՝ հետադիմության հետ, դարձել նրա հլու կամակատարները և պայքարում են Սովետական Հայաստանի դեմ։ Դրանք դաշնակ պարագլուխներն են ու նրանց հարողները։

Գաղութահայ կյանքի այդ հակամարտություններն ու պայքարը բնականաբար իրենց արտացոլումն են գտնում և մամուլի էջերում։ Ահա թե ինչու սփյուռքում մամուլը սովորաբար բաժանում են երկու հիմնական ուղղության՝ հայաստանյան և հակահայաստանյան[3], ըստ որում «հայաստանյան» անվան տակ հասկանում են առաջադիմական, դեմոկրատական, ընդհանրապես հայրենասիրական մամուլը, իսկ «հակահայաստանյան»՝ հետադիմական, մասնավորապես դաշնակցականներին պատկանող թերթերն ու ամսագրերը։ Այս առթիվ «Լրարեր»-ը գրում է. «Ի բաց առյալ ձգձիմ փոքրամասնութենն մը, մեր քաղաքական կազմակերպությանց, հայրենակցականներու, կրթական հաստատությանց, դրական և մշակութային կազմակերպությանց, նույնիսկ ինքզինք «ընդոր» հռչակող անհատներու կամ խմբակցությանց կողմե լույս տեսնող բոլոր հրատարակություններն ալ բարեկամական ոգիով կարտահայտվին մեր մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին»[4]։

Թերթեր ու ամսագրեր լույս են տեսնում համարյա բոլոր հայ գաղութներում, սակայն դրանք առավելապես կենտրոնացած են այն երկրներում, ուր համեմատաբար մեծ է հայերի թիվը ու ավելի աշխույժ մշակութային կյանքը։ Ինչպես ամեն մի գործում, այդտեղ էլ, իհարկե, լրջակաս դեր չեն կատարում մարդկանց կազմակերպական ընդունակությունները, եռանդը և նվիրվածությունը գործին։

Հայկական պարբերականների լույս ընծայման տեսակետից այսօր առաջնությունը պատկանում է Մերձավոր Արևելքի երկրներին, մասնավորապես Լիբանանին։

ԼԻԲԱՆԱՆ

Ապրելով կոմպակտ մասսայով, մեծ մասամբ Բեյրութում (մոտ 100 հազար և 20 հազարի չափ էլ երկրի մյուս վայրերում), լիբանանահայերին հաջողվել է ստեղծել մի ամբողջ շարք հասարակական, կուլտուրական, հայրենասիրական, երիտասարդական, սպորտային ու այլ կազմակերպություններ, թատերական, պարային, երգեցիկ խմբեր և այլն, այլ կերպ ասած՝ հայկական մշակութային միջավայր, որին իր ակտիվ մասնակցությունն է բերում նոր սերունդը, սովորելով ու ավարտելով տեղի հայկական այլևայլ դպրոցները, որոնց թիվը հասնում է մոտ յոթանասունի։ Չմոռանանք այստեղ հիշատակել, որ հայերի մշակութային այդ առաջա-

---

2 «Սովետական Հայաստան» որաթերթ, 23 սեպտեմբերի, 1961։

3 Տե՛ս Թ. Թորանյան, Մի քանի խոսք սփյուռքահայ մամուլի մասին, «Երևան» (Սոֆիա), 21 ապրիլի, 1961։

4 «Լրարեր», Սփյուռքահայ մամուլը և մայր հայրենիքը, 4 փետրվարի, 1961։

դիմությանը մեծ նպաստ է բերել Լիբանանի հյուրընկալ արաբ ժողովուրդը՝ իր բարեկամական լավ վերաբերմունքով դեպի հայ ժողովուրդն ու նրա մշակույթը։

Կարելի է ասել, որ Լիբանանը այսօր յուրահատուկ մշակութային կենտրոն է դարձել ամբողջ Մերձավոր Արևելքի հայության համար, իսկ Բեյրութը՝ իր նշանակությամբ ամենից ավելի խոշոր հայկական կենտրոնը ամբողջ սփյուռքում։

Բեյրութում ներկայումս հրատարակվում են հայերեն չորս օրաթերթ, մեկ շաբաթաթերթ և քսանի չափ մեծ ու փոքր, նշանակալից կամ աննշան այլ պարբերականներ։ Այդ պարբերականները լիովին ներկայացնում են թե՛ հայաստանյան և թե՛ հակահայաստանյան ուղղությունները սփյուռքահայ լրագրության մեջ, ինչպես նաև «Լրաբեր»-ի հիշատակած «չեզոքներին»։

Առաջադիմական-հայրենասիրական մամուլի ցայտուն օրգան Լիբանանում հանդիսանում է «ՄԵՐ ՆՇԱՆԱԲԱՆՆ Է ՅԱՌԱՋ» շաբաթաթերթը[5]։ Նա մեր ժամանակի ամենաառաջավոր գաղափարների ջատագովն է։ Խաղաղության պաշտպանության և ժողովուրդների բարեկամության հարցերը բազմակողմանի լուսաբանում են գտնում նրա էջերում։ Սուր քննադատության ենթարկելով իմպերիալիստների ոազմամոլ և գաղութարարական քաղաքականությունը, «ՅԱՌԱՋԸ» ցույց է տալիս, թե ինչպիսի հետևողականությամբ է պայքարում Սովետական Միությունը խաղաղության պաշտպանության, ժողովուրդների ազատության ու բարեկամության համար։ Թերթը սկզբունքային և հետևողական պայքար է մղում իմպերիալիզմի և ռեակցիայի մեքենայությունների դեմ, մասնավորապես նրանց այն արտահայտությունների դեմ, որոնք վերաբերում են Մերձավոր Արևելքի երկրներին ու հատկապես Լիբանանին։

Լիբանանի ներքին կյանքը և առանձնապես բանվոր դասակարգի պայքարը՝ իր իրավունքների պաշտպանության համար, նույնպես գտնվում է թերթի ուշադրության կենտրոնում։

Բնականորեն լիբանանահայության հասարակական և մշակութային կյանքը ևս իր լայն արձագանքն է գտնում «ՅԱՌԱՋԻ» էջերում։ Լիբանանահայությունը արաբ ժողովրդի հետ միասին ակտիվորեն մասնակցում է երկրի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքին և իր հոծ մեծամասնությամբ միշտ էլ կանգնած է Լիբանանի ազգային անկախության և ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում։

«ՅԱՌԱՋԸ» մեծ աշխատանք է տանում՝ էլ ավելի ամրապնդելու համար Լիբանանի հայերի կուլտուրական կապերը Սովետական Հայաստանի հետ, Հաճախակի հոդվածներ և այլ նյութեր տպագրելով սովետական հայրենիքի ձեռք բերած մեծ հաջողությունների մասին, թերթը վառ է պահում իր ընթերցողների մեջ սերը դեպի հայրենիքը։

«ՅԱՌԱՋԸ» եռանդուն պայքար է մղում իմպերիալիստների ծառայության մեջ գտնվող դաշնակցության դեմ։ Անդրադառնալով դաշնակ ղեկավարների գործունեությանը, թերթը Հ. Աղբաշյանի հոդվածում գրում է, որ նրանք, դաշնակ ղեկավարներ դարձյանները ու տեր-գալուստյանները «...դաշնակցությունը վերածած են լրտեսական և դավադրական անփառոնակ կազմակերպության մը»[6]։ Դրա վառ արտահայտություններից մեկը դաշնակցական լրտեսական կազմակերպության դատն էր, որ վերջերս տեղի ունեցավ Սիրիայում։

Դեմոկրատական-հայրենասիրական դիրքերի վրա է կանգնած և Բեյրութի «ԱՐԱՐԱՏ» օրաթերթը[7]։

Հանդես գալով միջազգային հարցերի վերաբերյալ հոդվածներով, «ԱՐԱՐԱՏԸ» դատապարտում է արևմտյան տերությունների իմպերիալիստական քաղաքականությունը, պաշտպանելով Սովետական Միության խաղաղասիրությունը։ «Պատերազմն խուսափելու համար ինչ-կառաջարկեն Սովետները» խմբագրականում (9 հունվարի, 1962) «ԱՐԱՐԱՏԸ» շարադրում է խաղաղության պաշտպանության սովետական առաջարկները։ Ընդգծելով Սովետական Միության այն հիմնական դրույթը, թե «խաղաղության համար պայքարիլ կը նշանակ պատերազմի հրաձիգներուն դեմ պայքարիլ», թերթը գրում է.

«Սոցիալիստական համաշխարհային սիստեմի մը ծնունդն ու արագ զարգացումը, Ասիա և Ափրիկեի մեջ նորանկախ պետություններու կազմությունը շանթահարիչ հարված մը տվին

---

5 «Մեր նշանարանն է Յառաջ» («Մեր էլ-էմամ»), քաղաքական շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Գասնիկ Ադպարյան։ Լույս է տեսնում Բեյրութում, 1957-ի հունվարից։

6 «Յառաջ» (Բեյրութ), 18 հունվարի, 1962։

7 «Արարատ», օրաթերթ ազգային-քաղաքական։ Խմբագիր՝ Ժիրայր Նայիրի։ Լույս է տեսնում 1937-ից։

գրամատիրության և իրականանալի դարձուցին մարդկության մեկ դարավոր երազը — առանց զենքի ու առանց պատերազմի մի կյանքի իրականացումը»[8]։

«ԱՐԱՐԱՏԸ» հաճախ հանդես է գալիս հնչակյանների անցյալի գործունեության վերաբերող ընդարձակ հոդվածներով, հիշողություններով։ Այդ նյութերում լինում են և՛ հետաքրքիր փաստական տվյալներ հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունից, և՛ չհիմնավորված ու անընդունելի գրույթներ։

Բեյրութի «ՁԱՐԹՈՆՔ» օրաթերթը[9] նույնպես կանգնած է խաղաղության, զինաթափման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման դիրքերի վրա։ Թե՛ «ԱՐԱՐԱՏԸ» և թե՛ «ՁԱՐԹՈՆՔԸ» հետևողական պայքար են մղում դաշնակցության և նրա դավադիր գործունեության դեմ։ Նրանք պարբերաբար տպագրում են հոդվածներ ու լուրեր Սովետական Հայաստանի մասին, լայնորեն ծանոթացնելով իրենց ընթերցողներին մեր երկրի նվաճումների հետ։

Ինչպես «ՅԱՌԱՋԸ», նույնպես և «ԱՐԱՐԱՏՆ» ու «ՁԱՐԹՈՆՔԸ» զգայի աշխատանք են տանում դաղութի մշակութային կյանքում, օժանդակելով հայ գրականության, արվեստի, դպրոցական, մարզական գործի աշխուժացմանն ու զարգացմանը։ Մեծ է նրանց աշխատանքը հատկապես երիտասարդության մեջ, որն ապրելով օտար միջավայրում, օտար կուլտուրաների ազդեցության ներքո, ամենից ավելի է ենթակա մայրենի լեզուն և ազգային մշակույթը կորցնելու վտանգին։

Ուշադրության արժանի է Բեյրութում լույս տեսնող «ՆԱՒԻՐԻ»[10] շաբաթաթերթը։

«ՆԱՒԻՐԻ»-ն տպագրում է բազմապիսի նյութեր՝ մեծ մասամբ դրական-հասարակական բովանդակությամբ։ Շնորհիվ իր նոանդուն խմբագրի, շաբաթաթերթը, հատկապես վերջին ժամանակներս, բավական զգաստ դիրքավորում է հանդես բերում քաղաքական հոսանքների գործունեության հանդեպ և, աստիճանաբար կողմնորոշվելով դեպի իսկական հայրենասիրությունը, դառնալով ավելի ու ավելի «հայաստանյան», այլևս չի հանդուրժում դաշնակների հայրենադավ, զրպարտիչ գործունեությունը և իր հոդվածներում սուր քննադատության է ենթարկում նրանց պարագլուխներին։

Իզուր չէ, որ հայտնի դաշնակ Կ. Դեորգյանը «ՆԱՒԻՐԻ» մասին գրում է որպես մի թերթի, «...որ այլևս դարձած է սլաքը ավրված ե նորոդվիլը անկարելի կողմնացույց»[11], քանի որ նա ցույց է տալիս ոչ այն կողմը, ուր սովոր են նայել դաշնակները։

«ՍՓՅՈՒՌՔԸ»[12] ևս բազմապիսի գրական-գեղարվեստական և պատմա-բանասիրական նյութեր է տպագրում։ Նա ունի «Հայրենի մշակույթ» մշտական սյունակը, որտեղ հրապարակում է սովետահայ հեղինակների գեղարվեստական գործերը։

«ՍՓՅՈՒՌՔԸ» կոչում է իրեն «չեզոք» կամ «անկողմնակալ» օրգան և ձգտում է «վեր կանգնելը քաղաքական հոսանքներից։ Թե որքան է դա հաջողվում իրեն, կամ, ավելի ճիշտ, որքան այդ չի հաջողվում, ցույց են տալիս նրա համարները, որոնցից յուրաքանչյուրը բառացիորեն տառապում է հստակ ուղեգծի պակասից։ Սկզբունքի պակասը հաճախ հանգեցնում է թյուր հասկացողություններ և սխալ ընդհանրացումներ։ Դրանք ապակողմնորոշում են ու խառնաշփոթություն մտցնում ընթերցողների մտածողության մեջ և պիտանի չեն կարող լինել հայրենասիրական զգացմունքների դաստիարակության համար։ Դժվար թե դա «ՍՓՅՈՒՌՔ» շաբաթաթերթի նախագծած սկզբնական նպատակն է։

Բեյրութում հրատարակվող օրաթերթերից են նաև «ԱՅԴՆ»[13] ու «ԱԶԴԱԿԸ»[14]։

«ԱՅԴԸ» տիպիկ բուրժուական թերթ է, նախատեսված հայկական դործարար շրջանների ընթերցողների համար, կարելի է ասել ամենից ոնկլամաշտար հայկական թերթերից։ Ունի գրական, գեղարվեստական բաժիններ, որոնք սակայն երգիծանքի, մարզական, կրոնական, կա

8 «Արարատ», 6 հունվարի, 1962։

9 «Ձարթոնք», օրաթերթ, խմբագիր՝ Դերսամ Ահարոնյան։ Լույս է տեսնում 1937-ից։

10 «Նաիրիս», շաբաթաթերթ ազգային-գրական։ Խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկյան։ Լույս է տեսնում 1952-ից։

11 «Ամենուն Տարեգիրքը», 1958, Ե տարի, էջ 704—705։

12 «Սփյուռք», շաբաթաթերթ գրական-գեղարվեստական-հասարակական։ Պատասխանատու խմբագիր՝ Սիմոն Սիմոնյան։ Լույս է տեսնում 1958 թվականից։

13 «Այդ»։ Քաղաքական-տնտեսական օրաթերթ։ Տեր և տնօրինուհի՝ Լյուսի Թոսպատ։ Լույս է տեսնում 1953 թվականից։

14 «Ազդակ», օրաթերթ ազգային, գրական, քաղաքական, հասարակագիտական։ Լույս է տեսնում Բեյրութում 1926-ից։

նանց նվիրված բաժինների և հետաքրքրաշարժ ու սենսացիոն նյութերի հետ միասին, իրենց բովանդակությամբ ու բնույթով հետապնդում են ոչ թե, ասենք, դաստիարակչական, լուսավորական, այլ թերթը ընթեռնելի դարձնելու նպատակներ։ Այդ հանգամանքը նկատի ունենալով, թերթը առանձին լուրեր է տպում նաև Սովետական Հայաստանի մասին։ Դեպի Արևմուտք կողմնորոշվող այդ թերթի տեսադաշտից հասկանալի պատճառներով դուրս են մնում պատերազմի դեմ պայքարի և խաղաղության հարցերը։

«ԱԶԴԱԿԸ» դաշնակցականների օրգանն է։ Միջազգային քաղաքական հարցերում ագրեսիվ, ռեակցիոն դիրքերի վրա է կանգնած։ Հարձակումներ է գործում և հերյուրանքներ տպագրում սովետական իրավակարգի, ինչպես և առհասարակ առաջադիմական կազմակերպությունների դեմ։

«ԱԶԴԱԿԸ» նյութեր ու լուրեր է տպագրում նաև Սովետական Հայաստանի մասին, սակայն հատուկ ընտրությամբ, խեղաթյուրելով փաստերը, հգնելով սպիտակը սև ցույց տալ։

Բեյրութում հրատարակվում են նաև գրական պարբերականներ։

Ուշագրավ է «ՅԱՌԱՋ-ԳՐԱԿԱՆԸ»[15], որը լույս է տեսնում որպես «ՄԻՐ ՆՇԱՆԱԲԱՆՆ Է ՅԱՌԱՋ» շաբաթաթերթի հերթական համարը՝ ամիսը մեկ անգամ։ Նրա շուրջը հավաքված են և՛ ավագ սերնդի մտավորականներ, և՛ երիտասարդ կարող ուժեր։ «ՅԱՌԱՋ-ԳՐԱԿԱՆՆ» իր առջև խնդիր է դրել դառնալ «իր ապրած ժամանակաշրջանի հարազատ ձայնը», պաշտպանել նորը, գեղեցիկն ու առաջադեմը գրականության մեջ։ Լույս տեսած համարները գալիս են հավաստելու, որ «ՅԱՌԱՋ-ԳՐԱԿԱՆ»-ը հավատարիմ է իր որդեգրած սկզբունքներին։

Ավելի ավագ են «ՅԱՌԱՋ-ԳՐԱԿԱՆԻՑ» «ԱՐԱՐԱՏ-ԳՐԱԿԱՆԸ»[16] և «ՇԻՐԱԿԸ»[17], որոնք լույս են տեսնում որպես ամսագրեր։ Նրանց կից աշխատակցում են ծանոթ սփյուռքահայ առաջադեմ գրողներ։

Վերոհիշյալ երեք առաջադիմական գրական պարբերականները գգալի գեր են կատարում սփյուռքահայ գրական-գեղարվեստական մտքի զարգացման գործում, ծանոթացնում են իրենց ընթերցողներին ոչ միայն սփյուռքի գրողների նոր ստեղծագործությունների, այլև սովետահայ, արաբ և ուրիշ ժողովուրդների գրողների գործերի հետ։

Այս տարվա սկզբից Բեյրութում սկսել է լույս տեսնել «ԲԱԳԻՆ»[18] գրական ամսագիրը, որը ըստ երևույթին փոխարինելու է եկել մի քանի տարի առաջ դադարած «Ակոսին»։

«Բագին» դաշնակցականների գրական օրգանն է և առաջին իսկ համարներից աչքի է ընկնում իր հետադիմական ուղղությամբ, հոռետեսությամբ ու անկումային ոգով։ Այստեղ ևս, ինչպես դաշնակցական բոլոր մյուս օրգաններում՝ քաղաքական թե «գրական-գեղարվեստական», անպակաս են կատաղի հարձակումները սովետահայ գրականության և սովետական հայրենիքի դեմ։

Անդրադառնալով «Բագին» հրատարակողների հոռետեսական ոգուն, գրող Գեորգ Սեսեր հարց է տալիս, թե ի՞նչն է դրա պատճառը, և ճշմարտացիորեն պատասխանում. «Մեզի համար հստակ է ամեն ինչ։ Կովան չունին, խարիսխ չունին»[19]։ Եվ իրոք. ժողովրդից մերժված և պատմության կողմից դատապարտվածները այլ ոգով «ստեղծագործել» չեն կարող։

Ինչպես արդեն տեսանք, սփյուռքում իր պարբերական հրատարակություններն ունի և Բարեգործական Միությունը (Հ. Բ. Ը. Մ.)։ Այդ օրգանները տպագրում են նյութեր Բարեգործականի գործունեության վերաբերյալ, հաշվետվություններ, տեղեկություններ կրթական հաստատությունների և այլ ձեռնարկների աշխատանքների մասին, ինչպես նաև գրական-գեղարվեստական գործեր։

Բարեգործականի Լիբանանի շրջանային հանձնաժողովը Բեյրութում հրատարակում է «ԽՈՍՆԱԿ» ամսագիրը[20], մոտավորապես վերոհիշյալ բովանդակությամբ։ Նշենք, որ Բարեգոր

---

15 «Յառաջ-Գրական», ամսաթերթ։ Լույս է տեսնում 1961-ից։

16 «Արարատ-Գրական», գրական ամսագիր։ Հրատարակություն «Արարատ» օրաթերթի։ Լույս է տեսնում 1956-ից։

17 «Շիրակ», ամսագիր գրականության, արվեստների և մշակույթի։ Հրատարակություն Թեքեյան մշակութային Միության։ Խմբագիր՝ Զարեհ Մելքոնյան։ Լույս է տեսնում 1956-ից։

18 «Բագին», ամսագիր գրականության և արվեստի։ Խմբագրական կազմ։ Լույս է տեսնում 1962-ից։

19 «Յառաջ-Գրական», հունվար-փետրվար, 1962։

20 «Խոսնակ», ամսաթերթ։ Խմբագիր՝ Ա. Մակարյան։ Լույս է տեսնում 1957-ից։

ծականի հրատարակած պարբերականները հիմնականում կանգնած են հայրենասիրական դիրքերի վրա։

Մի քանի տարվա դադարից հետո 1961 թ. սկսեց վերահրատարակվել «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ»21 ամսագիրը։ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻՆ» կանանց ամսագիր է։ Հասարակական, մանկավարժական-դաստիարակչական ու առողջապահական նյութերից բացի, տպագրում է և գրական-գեղարվեստական գործեր, յուրեր ու հոդվածներ Սովետական Հայաստանի և սփյուռքի մասին։

Բեյրութում լույս են տեսնում նաև «ՆՈՐ ԿՅԱՆՔ» կինո-հեռուստատեսային շաբաթաթերթը և «ԲԺԻՇԿ» առողջապահական ամսաթերթը։

Բացի վերոհիշյալ հրատարակություններից, Լիբանանում հրատարակվում են մեկ ու կես տասնյակի չափ այլ պարբերականներ։

Մի շարք դպրոցներ ունեն իրենց՝ աշակերտական պարբերական հրատարակությունները՝ գերազանցապես գրական բովանդակությամբ22։ Դրանք հեղինակում ու խմբագրում են բարձր դասարանի աշակերտները՝ ուսուցիչների ղեկավարությամբ և ենթակա են այն ազդեցություններին, որոնց ներքո գտնվում է տվյալ վարժարանը։ Օրինակ, Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանի աշակերտական օրգան «ՆՎԻՐՈՒՄԸ» բովանդակում է հայրենասիրական նյութեր, գրում է Շիրվանզադեի ռեալիզմի և նման այլ նյութերի մասին, իսկ ավետարանական վարժարանի «ՀՈՒՆՁՔՈՒՄ» հանդիպում ենք հոդվածների «Աղոթք», «Ասված կտեսնի ճշմարտությունը բայց կհամբերի», «Աղոթող մամիկը» վերնագրերով։ Բարեբախտաբար սփյուռքի դպրոցների ճնշող մեծամասնությունը գտնվում է դեմոկրատական, հայրենասիրական կազմակերպությունների ձեռքում։

Քիչ չեն Լիբանանում և կրոնական հրատարակությունները23, իրենց հատուկ կրոնա-բարոյական, կղերական բովանդակությամբ։ Պարբերականներ ունեն և՛ լուսավորականները, և՛ ավետարանականները, և՛ փոքրաթիվ կաթոլիկները։ Բայց դրանք շատ սահմանափակ ընթերցողներ ունեն, և նրանց ազդեցությունը, մանավանդ երիտասարդության վրա, չնչին է։

---

21 «Երիտասարդ Հայուհի», կանանց ամսագիր։ Վարիչ-հիմնադիր՝ Սիրան Սեղա։ Լույս է տեսնում Տրիպոլիում (Լիբանան)։

22 «Նվիրում», «Հորիզոն», «Ուսանող», «Հունձք», «Ջահակիր», «Վերելք»։

23 «Հասկ», «Ավելի կյանք», «Ջանասեր», «Պատանեկան արձագանք», «Մասիս», «Ավետիք»։